Դուրս եկաւ մի վայելչահասակ կին, թուխ դէմքով, սեւորակ, կրակոտ աչքերով, խոհանոցի ղենջակը գոգնոցի տեղ կապած: Այդ նազելի կինը, թէեւ վաղուց անցուցել էր երիտասարդական տարիները, բայց դեռեւս չէր կարելի առանց հիացմունքի նայել նրա վրայ: Նա ներկայացնում էր գեղեցկութիւնը իր հասունութեան մէջ: Նա մի ժամանակ Դինբուլիների ամրոցի զարդն էր, յափշտակուած Աւղանիստանի անապատներից: Իսկ այսօր մի շինական խաղաղ տան ժրաջան տանտիկինն էր:

Դա պառաւի աղջիկն էր, Կարօյի կինը եւ Հիւբբիի մայրը՝ գեղեցիկ Ասլին:

Տեսնելով պառաւին, սեմի մօտ նստած, կարեկցաբար դիմեց նրան.

— Մայրիկ, դու դեռ երէկ գանգատւում էիր ոսկրացաւից, այժմ դարձեալ նստել ես այդ սառն քարի վրայ:

— Իմ ոսկորները սառի եւ քարի վրայ են պնդացել, զաւակս, — պատասխանեց պառաւը եւ չշարժուեցաւ իր նստած տեղից:

Ասլին չհակառակեց նրա յամառութեանը, ներս մտաւ եւ իսկոյն դուրս բերեց մի փոքրիկ օթոց, խնդրեց նստել նրա վրայ, որը դժուարութեամբ ընդունեց պառաւը:

Ասլին անցաւ պարտէզը, ուր աշխատում էր նրա ամուսինը: Անցաւ վարդենիների եւ յասմիկի ծառուղիների միջով: Կշտից քարշ ընկած մկրատը տարաւ դէպի մի խոշոր սպիտակ վարդ, կտրեց եւ խրեց կուրծքի վրայ: Յետոյ քաղեց երկրորդը, երրորդը... զանազան գոյներով, եւ ճաշի սեղանի համար մի գեղեցիկ փունջ պատրաստեց:

— Մայրի՛կ, — ձայն տուեց հեռուից փոքրիկ Աշխէնը:

Մայրը մօտեցաւ:

— Տե՛ս, այդ մէկը ես կապեցի: — Նա ցոյց տուեց իր կապած պատուաստի ճիւղը: — Տասն տարուց յետոյ կարմիր խնձոր կը տայ:

Մայրը գրկեց աղջկան եւ համբուրեց, յետոյ դարձաւ դէպի ամուսինը, հարցնելով.

— Այլեւս ովքե՞ր կը լինեն ճաշին:

— Մերոնք, — պատասխանեց այրը, մերթ նայելով կնոջ վրայ եւ մերթ նրա փնջած ծաղիկների վրայ, կարծես կամենալով ստուգել, թէ դրանցից որն աւելի անուշահոտ է:

— Դու ասեցիր, որ ուրիշ հիւրեր եւս կլինին: